Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի
2008 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 1/1154Ա որոշմամբ

Ուղեցույց

Ֆինանսական հաստատությունների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ

Բովանդակություն

Ներածություն 3
Բաժին 1. Ֆինանսական հաստատությունների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում առկա ռիսկերի չափանիշները 4
Գլուխ 1. Երկրի կամ աշխարհագրական ռիսկ 4
Գլուխ 2. Հաճախորդի ռիսկ 4
Գլուխ 3. Ապրանքի/ ծառայության ռիսկ 5
Գլուխ 4. Ռիսկերի ենթադրվող մակարդակի որոշման վրա ազդող գործոնները 5
Բաժին 2 Հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն, ռիսկերի վերլուծություն և վերահսկողություն 6
Գլուխ 1. Հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն 6
Գլուխ 2. Ռիսկերի մակարդակի վերլուծությունը և վերահսկողությունը 7

Ներածություն

Սույն ուղեցույցը ներկայացվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11 հոդվածի 2-րդ մասի հիման վրա և տարածվում է Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված հաշվետվություն տրամադրող անձ հանդիսացող ֆինանսական հաստատությունների վրա: Ուղեցույցը մանրամասնում է ռիսկերի տեսակները, դրանց բնորոշումը, ինչպես նաև այդ բնորոշման վրա ազդող գործոնները և ռիսկերի մակարդակի վերլուծության ու վերահսկողության սկզբունքները:

Ռիսկերի կառավարման դասակարգված մոտեցումն ապահովում է պոտենցիալ ռիսկերի կառավարման պատշաճ ռազմավարության կիրառումը՝ ֆինանսական հաստատություններին հնարավորություն ընձեռելով հաճախորդների նկատմամբ իրականացնել տարբերակված և յուրաքանչյուր հաճախորդի ռիսկի բնութագրին համարժեք հսկողություն, միաժամանակ՝ արդյունավետ կերպով օգտագործելով հաստատության մարդկային և տեխնիկական ռեսուրսները: Այս տեսանկյունից կարևորվում է հաճախորդների խմբավորումն ըստ ռիսկայնության՝ համապատասխանաբար բարձր, միջին և ցածր մակարդակների, որոնցից յուրաքանչյուրի հանդեպ տարբերակված մոտեցում կիրառելով՝ կարելի է հնարավորինս արդյունավետ կառավարել ֆինանսական հաստատություններում ՓԼ/ԱՖ գծով հնարավոր ռիսկերը:

Սույն ուղեցույցում օգտագործվող հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված ձևակերպումներին համապատասխան կերպով:

Բաժին 1. Ֆինանսական հաստատությունների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում առկա ռիսկերի տեսակները

Գլուխ 1. Երկրի կամ աշխարհագրական ռիսկ

1. Երկիրը կամ աշխարհագրական տարածքը բարձր ռիսկային համարելու ազդակ կարող է հանդիսանալ հետևյալ գործոնների առկայությունը՝

1) գործարքի մեջ ներգրավված է երկիր, որի նկատմամբ կիրառվում են ՄԱԿ-ի կողմից սահմանված արգելքներ, պատժամիջոցներ կամ նմանատիպ այլ միջոցառումներ,
2) գործարքի մեջ ներգրավված է երկիր, որտեղ, հավաստի աղբյուրների կողմից (օրինակ՝ ՖԱԹՖ-ի, ԱՄՀ-ի, Համաշխարհային Բանկի և Էգմոնտ խմբի) հրապարակված տվյալների համաձայն, ոչ պատշաճ մակարդակով են կազմակերպված կամ կիրառված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքները, ստանդարտները և կարգավորումը,
3) գործարքի մեջ ներգրավված է երկիր, որտեղ, հավաստի աղբյուրների կողմից (օրինակ՝ Transparancy International, GRECO, Doing business, BEEPS և այլն) հրապարակված տվյալների համաձայն, կոռուպցիան և հանցավոր գործունեությունը հասնում են մեծ ծավալների,
4) գործարքի մեջ ներգրավված է երկիր, որը, հավաստի աղբյուրների կողմից (օրինակ՝ տարբեր երկրների անվտանգության ծառայություններ, ՋԼՄ-երում հրապարակումներ) հրապարակված տեղեկությունների համաձայն, օժանդակում է ահաբեկչության ֆինանսավորմանը, կամ որտեղ առավել հաճախ են արձանագրվում ահաբեկչության դեպքերը:

2. Բացի վերը նշված ազդակներից՝ յուրաքանչյուր ֆինանսական հաստատություն կարող է, ելնելով իր փորձից և գործառնական առանձնահատկություններից, որպես բարձր ռիսկային դասակարգել այնպիսի երկիր կամ աշխարհագրական տարածք, որը ներառված չէ վերը թվարկված չափորոշիչների շարքում:

Գլուխ 2. Հաճախորդի ռիսկ

3. Հաճախորդների խմբերը, որոնց գործունեությունը կարող է հանդիսանալ բարձր ռիսկային, հետևյալն են՝

1) քաղաքական ազդեցություն ունեցող անձինք (քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ տարբեր հանրամատչելի աղբյուրներից, ինչպիսիք են՝ ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության պաշտոնական կայքէջը, տարբեր երկրների համապատասխան պետական մարմինների կայքէջերը, և այլն: Բացի նշվածներից՝ գոյություն ունեն նաև տարբեր վճարովի տեղեկատվական բազաներ (օրինակ՝ World-check, Factiva), որոնք քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ տրամադրում են հնարավոր համակողմանի տեղեկատվություն),
2) հաճախորդներ, որոնց հաշիվներով իրականացվում են միջոցների հաճախակի և անբացատրելի շարժեր դեպի տարբեր ֆինանսական հաստատություններ,
3) հաճախորդներ, որոնց կողմից իրականացվող գործարքների և/կամ գործարար հարաբերությունների կառուցվածքը կամ բնույթը դժվարեցնում է իրական շահառուի բացահայտումը,
4) կանխիկի վրա հիմնված գործունեություն իրականացնող հաճախորդներ, ներառյալ՝ դրամական ծառայություններ մատուցող հաճախորդները (օրինակ՝ դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ, փոխանակման կետեր), խաղատներ, շահումով խաղ կազմակերպող անձինք, կամ հաճախորդներ, որոնց

գործունեությունը սովորաբար հիմնված չէ կանխիկի վրա, սակայն վերջիններս որոշակի գործարքների համար օգտագործում են կանխիկի զգալի ծավալներ,
5) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ,
6) հաշվապահներ, իրավաբաններ կամ այլ նմանատիպ գործունեություն իրականացնող մասնագիտացված անձինք, որոնք սպասարկվում են ֆինանսական հաստատություններում և գործում են իրենց հաճախորդների անունից,
7) միջնորդներ (ֆինանսական և ոչ ֆինանսական), որոնց գործունեությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությամբ չի կարգավորվում,
8) ոչ ռեզիդենտ հաճախորդներ,
9) ըստ ներկայացնողի արժեքորերից, այդ թվում՝ ըստ ներկայացնողի չեկային գրքույկներից օգտվող հաճախորդներ:

Գլուխ 3. Ապրանքի/ ծառայության ռիսկ

4. Ֆինանսական հաստատությունների կողմից մատուցվող որոշ ծառայություններ կարող են հանդիսանալ փողերի լվացման տեսանկյունից բարձր ռիսկային: Դրանց թվին են պատկանում՝
1) սահմանափակ թվով հատուկ կատեգորիայի հաճախորդների համար անհատականացված բանկային ծառայությունների մատուցումը (private banking),
2) առցանց բանկային գործարքները (հաշիվների հեռակառավարումը, on-line banking),
3) միջազգային թղթակցային բանկային հարաբերությունները,
4) հաճախորդների վարկավորումը, երբ տրամադրվող վարկերն ապահովված են լինում նույն հաստատությունում ներդրված ավանդով,
5) որևէ իրավաբանական անձի հետ փոխկապակցված ֆիզիկական անձի և մեկ այլ իրավաբանական անձի միջև կատարվող գործարքներ,
6) գործարքներ, որոնցում ներգրավված են օֆշորային երկրներում/տարածքներում գրանցված ընկերություններ,
7) ինտերնետային առաքում:
5. Հարկ է նշել, որ ցածր ռիսկային ապրանքը կարող է դասվել որպես բարձր ռիսկային, եթե հաճախորդը, որը ձեռք է բերելու այդ ապրանքը, ֆինանսական հաստատության կողմից դասվել է բարձր ռիսկային խմբում (օրինակ՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձի կողմից ապահովագրավճարների իրականացումը):

Գլուխ 4. Ռիսկերի ենթադրվող մակարդակի որոշման վրա ազդող գործոնները

6. Ռիսկերի վրա հիմնված մոտեցման մեթոդաբանությունը կարող է հաշվի առնել ռիսկերի գործոններ, որոնք բնութագրական են առանձին հաճախորդի կամ գործարքի համար և կարող են ազդել դրանց գծով ռիսկերի ենթադրվող մակարդակի որոշման վրա: Այսինքն, այդ գործոնները կարող են ավելացնել կամ պակասեցնել որևէ հաճախորդին կամ գործարքին վերագրվող ռիսկը: Դրանց թվին են պատկանում.
1) հաճախորդի ինքնությամբ պայմանավորված՝ նրա ենթադրվող «նորմալ» և «ոչ նորմալ» վարքագիծը,
2) բանկային հաշվի նպատակը կամ գործարար հարաբերության տեսակը,
3) կոնկրետ հաճախորդի կողմից հաշվին ներդրվող միջոցների ծավալը կամ իրականացվող գործարքի գումարը,
4) կարգավորման, կառավարման կամ վերահսկողական համակարգը, որի ներքո գործում է հաճախորդ ֆինանսական հաստատությունը,
5) գործարար հարաբերության տևողությունը և կանոնակարգվածությունը,
6) երկրի հետ ծանոթ լինելու հանգամանքը, որը ներառում է տվյալ երկրի օրենքների, կանոնակարգերի և կանոնների իմացությունը,

7) միջնորդ իրավաբանական անձանց կամ կառույցների օգտագործումը, որոնք չունեն ակնհայտ տնտեսական նպատակ կամ այլ տրամաբանական հիմնավորում կամ անհարկիորեն բարդացնում են գործարքը/գործարար հարաբերությունը և հանգեցնում են թափանցիկության բացակայությանը,
8) և այլն:

Բաժին 2. Հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն, ռիսկերի վերլուծություն և վերահսկողություն

Գլուխ 1. Հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն

7. «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի կիրառությունը ֆինանսական հաստատություններին հնարավորություն է տալիս ձևավորել խելամիտ համոզմունք առ այն, որ հաստատությունը տիրապետում է յուրաքանչյուր հաճախորդի ինքնության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությանը, ինչպես նաև պատկերացում ունի այն գործարքների տեսակի վերաբերյալ, որոնք հաճախորդը կատարում է և/կամ հավանական է, որ կկատարի: Ֆինանսական հաստատություններին անհրաժեշտ է կիրառել հետևյալ ընթացակարգերը.
1) ժամանակին նույնականացնեն և ստուգեն յուրաքանչյուր հաճախորդի ինքնությունը,
2) ձեռնարկեն անհրաժեշտ միջոցառումներ՝ պարզելու իրական շահառուի առկայությունը, և առկայության դեպքում՝ նույնականացնեն և ստուգեն վերջինիս ինքնությունը,
3) եթե հաճախորդի կողմից հանդես է գալիս լիազորված անձ, ապա պարտավոր են նաև նույնականացնել այդ անձին, ստուգել նրա ինքնությունը և հաճախորդի անունից հանդես գալու նրա լիազորությունը,
4) ձեռք բերեն անհրաժեշտ տեղեկատվություն հաճախորդի նյութական վիճակը և առևտրային գործունեությունը, ներառյալ՝ գործարքների ակնկալվող շրջանակը և բնույթը հասկանալու համար:

8. Ֆինանսական հաստատությունների համար ելակետային է հանդիսանում հաճախորդի ռիսկերի գնահատումը՝ հաշվի առնելով ռիսկերի ակնկալվող մակարդակի վրա ազդեցություն ունեցող գործոնները վերջնական որոշումն ընդունելուց առաջ: Ֆինանսական հաստատությունների կողմից յուրաքանչյուր հաճախորդի նկատմամբ կիրառվող համապատասխան պատշաճ ուսումնասիրության մոտեցումները կարող են լինել հետևյալը՝
1) պատշաճ ուսումնասիրության ստանդարտ մոտեցում, որը կիրառվում է բոլոր հաճախորդների նկատմամբ,
2) ավելի մեղմ մոտեցում ցածր ռիսկային խմբերի նկատմամբ, օրինակ՝
    - ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնց միջոցների ձևավորման հիմնական աղբյուրն աշխատավարձն է, կենսաթոշակը կամ հայտնի աղբյուրից ստացվող սոցիալական նպաստը, երբ տվյալ գործարքի բնութագիրն էապես չի տարբերվում հաշվով սովորաբար կատարվող գործարքների բնութագրերից,
    - հաճախորդները, որոնց ինքնության և իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը հանրորեն հասանելի է, և որոնց գործունեության նկատմամբ պետական մարմինների կողմից իրականացվում է վերահսկողություն,
    - առանձին գործարքների նկատմամբ, որոնց իրականացման համար պահանջվում են աննշան գումարով միջոցներ (օր.՝ կոմունալ վճարումները, ապահովագրավճարները և այլն),
3) առավել խիստ մոտեցում բարձր ռիսկային խմբերի նկատմամբ:

9. Ֆինանսական հաստատություններն անհրաժեշտ է ձեռնարկեն պատշաճ միջոցառումներ և իրականացնեն հսկողություն՝ նվազեցնելու այն հաճախորդների պոտենցիալ ՓԼ/ԱՖ ռիսկերը, որոնք տվյալ ֆինանսական հաստատության կողմից կիրառվող ռիսկերի վրա հիմնված մոտեցման արդյունքում ճանաչվել են որպես բարձր ռիսկային: Այդ միջոցառումները և հսկողությունը կարող են ներառել.
1) ֆինանսական հաստատության բարձր ռիսկային հաճախորդների և գործարքների վերաբերյալ իրազեկության բարձր աստիճանի ապահովումը,

2) «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի խորացված աստիճանի կիրառությունը կամ խորացված պատշաճ ուսումնասիրությունը,
3) գործարքների խորացված մոնիտորինգը,
4) մշտական հսկողության խորացված աստիճանը և գործարար հարաբերությունների հաճախակի դիտանցումը/անընդհատ ուսումնասիրությունը:

Գլուխ 2. Ռիսկերի մակարդակի վերլուծությունը և վերահսկողությունը

10. Ֆինանսական հաստատություններում ռիսկերի վրա հիմնված մոտեցման արդյունավետ գործելու նախապայման է հանդիսանում հատուկ մեթոդաբանությունների մշակումն ու կիրարկումը, որը ենթադրում է կոնկրետ տվյալ տեսակի ռիսկերի տեսակները կառավարելու համար որոշակի վերլուծության և վերահսկողության համակարգերի ներդրումը: Նման մեթոդաբանություն կարող է հանդիսանալ հետևյալ հաջորդական քայլերի համախումբը.
1) դիտարկել ապրանքը/ծառայությունը, մատուցման ձևը, հաճախորդի տեսակը, գտնվելու վայրը,
2) դիտարկել, թե արդյոք առկա ռիսկի գործոնները տվյալ գործարքը/գործարար հարաբերությունը փոխադրում են ավելի բարձր ռիսկային խումբ,
3) բնորոշել տվյալ գործարքին/գործարար հարաբերությանը վերագրվող ռիսկը որպես ցածր, միջին կամ բարձր, որից ելնելով նախաձեռնել հետևյալ գործողությունները.
ա. ցածր ռիսկի դեպքում կարող է կատարվել միայն նույնականացման և հասցեի ճշտման նվազագույն իրավական պահանջը,
բ. միջին ռիսկի դեպքում անհրաժեշտ է, բացի նույնականացման և հասցեի ճշտման պահանջից, պարզել/ստուգել միջոցների ծագման աղբյուրը (անձնական հաշիվ և այլն),
գ. բարձր ռիսկի դեպքում, բացի վերը նշված պահանջից, անհրաժեշտ է նաև պարզել, թե այդ միջոցները ինչպիսի գործունեության արդյունքում են ձևավորվել:
11. Ֆինանսական հաստատության կողմից իրականացվող դիտանցումները նույնպես պետք է կատարվեն համանման տրամաբանությամբ, այսինքն՝ ցածր ռիսկերի դեպքում դիտանցումներ չեն իրականացվում, միջին ռիսկերի դեպքում իրականացվում են սահմանափակ դիտանցումներ, իսկ բարձր ռիսկերի դեպքում՝ հաճախակի և խորացված դիտանցումներ: Նմանօրինակ մոտեցում կարող է կիրառվել նաև այլ ընթացակարգերում: Օրինակ՝ եթե հաճախորդը կամ պոտենցիալ հաճախորդը դասակարգվել է որպես ցածր ռիսկային, ապա նրա հետ գործարար հարաբերություն հաստատելիս անհրաժեշտ չէ ավագ ղեկավարության համաձայնությունը, ինչը պարտադիր է, օրինակ՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց պարագայում: